

#mymastercard արշավի մասնակցության պայմաններ

1. Ներածություն

- 1.1 «Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի և MasterCard-ի կողմից իրականացվում է համատեղ արշավ /այսուհետ՝ Արշավ/ Բանկի Maestro, Maestro Transfer, MasterCard Standard, MasterCard UEFA Champions League, MasterCard Gold հիմնական քարտեր / այսուհետ՝ Քարտ / ունեցող քարտապանների համար / այսուհետ՝ Քարտապան/:
- 1.2 Արշավի կազմակերպիչ է հանդիսանում «Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ն /այսուհետ՝ Կազմակերպիչ/:
- 1.3 Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:
- 1.4 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

- 2.1 Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am կայքում և www.myuefacard.am հարթակում:
- 2.2 Կազմակերպիչն իրավունք ունի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի 2.1 կետում նշված կայքում և հարթակում:
- 2.3 Արշավի շրջանակներում Պարզևատրումները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:
- 2.4 Արշավին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:
- 2.5 Մեկ անձը կարող է գրանցվել միայն մեկ անգամ:
- 2.6 Գրանցումները հաստատվում են Կազմակերպիչի կողմից՝ Քարտապանների գրանցման համար նախատեսված տվյալների ստուգումից հետո: Կազմակերպիչն իրավունք ունի անվավեր ճանաչել և չդիտարկել գրանցման ներկայացված կեղծ կամ թերի դիմումները: Կազմակերպիչն իրավունք ունի կապ հաստատել գրանցված Քարտապանների հետ և ստուգել դիմումի իսկությունը: Եթե Քարտապանը հրաժարվում է ներկայանալ կամ նրա պատասխանների և դիմումի միջև տվյալների անհամապատասխանություն կա, ապա նրա մասնակցությունը կարող է չեղյալ համարվել:

3. Մասնակցության պայմաններ

- 3.1 Արշավի մասնակցության նպատակով սույն թվականի մարտի 1-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ Քարտապանները պետք է իրականացնեն նվազագույնը 200,000 ՀՀ դրամի (համարժեք արտարժույթի) վճարային գործառնություններ և մինչև սույն թվականի հունիսի 30-ը ներառյալ գրանցվեն www.myuefacard.am հարթակում:
www.myuefacard.am հարթակը հանդիսանում է Արշավի մասնակցության համար դիմելու և գրանցվելու միակ հարթակը:
Քարտից քարտ փոխանցումները, ինտերնետային վճարումները (բացառությամբ հայաստանյան բանկերի կողմից սպասարկվող առցանց հարթակներում կատարված վճարումները), քարտով կատարված կոմունալ վճարումները, էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքները և բջջային օպերատորների գրասենյակներում կատարված վճարումները չեն դիտարկվելու որպես վճարային գործառնություններ: Վճարային գործառնությունների հաշվարկը կատարվելու է հիմք ընդունելով գործարքի կատարման ամսաթիվը:
- 3.2 Արշավին կարող են մասնակցել ինչպես նոր, այնպես էլ գործող Քարտեր ունեցող Քարտապանները: Ընդ որում, Կից Քարտերի Քարտապանները չեն կարող մասնակցել հիմնական Քարտից անկախ: Կից Քարտերով

կատարված վճարային գործարքները գումարվելու են հիմնական Քարտով կատարված վճարային գործարքներին:

- 3.3 Արշավի ընթացքում հաշվի են առնվելու Քարտապանի կողմից իր գործող բոլոր քարտերով կատարված վճարային գործառնությունների հանրագումարը:
- 3.4 www.myuefacard.am հարթակում գրանցված Քարտապանների միջև խաղարկությունը իրականացվելու է մինչև սույն թվականի հուլիսի 20-ը ներառյալ:
- 3.5 www.myuefacard.am հարթակում պատահականության սկզբունքով հաղթող ճանաչված Քարտապանին տրամադրվելու է առաջիկայում կայանալիք Չեմպիոնների լիգայի եզրափակիչ խաղի մասնակցության 2 տոմս և խաղը հյուրընկալող քաղաքում 4-օրյա (3 գիշեր) հանգստի փաթեթ 2 անձի համար (հաղթող մասնակիցը և վերջինիս կողմից ընտրված մեկ այլ անձ): Փաթեթը ներառում է էկոնոմ դասի ավիատոմս և 3 կամ ավելի աստղ ունեցող հյուրանոցում կեցություն: Ընդ որում, Կազմակերպիչը հոգում է միայն նշված ծախսերը:
- 3.6 «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ խմբի անդամ կազմակերպության, «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ աշխատակիցները չեն կարող հանդիսանալ արշավի հաղթող կամ ընտրվել հաղթող Քարտապանի կողմից 2-րդ մասնակից անձ:
- 3.7 Արշավը ամփոփվելու է մինչև սույն թվականի հուլիսի 20-ը ներառյալ և հրապարակվելու է մինչև սույն թվականի հուլիսի 30-ը ներառյալ www.myuefacard.am հարթակում:
- 3.8 Հաղթող մասնակցի պարգևատրումը հնարավոր կլինի իրականացնել Չեմպիոնների լիգայի եզրափակիչ խաղի ժամկետը պաշտոնապես հրապարակված լինելուց հետո:
- 3.9 Հաղթող Մասնակցին դեսպանատան/հյուպատոսության կողմից արտոնագրի (վիզայի) չտրամադրման, ինչպես նաև մասնակցության ապահովման անհնարինության դեպքում Կազմակերպիչի կողմից կարող է սահմանվել հաղթող մասնակցին առձեռն 300,000 ՀՀ դրամ փոխհատուցում: